Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Վահան Տերյանի <<Մթնշաղի անուրջներ>> ժողովածուի բանաստեղծությունների ուսուցումը

Կատարող՝ Սուսաննա Մելքոնյան

Դպրոց՝ Հովի. Շիրազի անվան թիվ 169 հիմնական դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և հայ գրականություն

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023 թ.

Բովանդակություն

Ներածություն.....3
«Մթնշաղի անուրջներ».....5
Բանաստեղծությունների այլընտրանքային ուսուցման
մեթոդներ.....16
Եզրակացություն.....17
Գրականության ցանկ.....19

Ներածություն

Վահան Տերյանը մեր պոեզիայի ամենասիրված ու նվիրական անուններից է: Նրա անդրանիկ ժողովածուն՝ «Մթնշաղի անուրջներ»-ը, իր հասարակական և գեղագիտական բովանդակությամբ, կառուցվածով, պատկերների, ոճի և լեզվի յուրահատկությամբ նոր դարագլուխ բացեց հայ բանաստեղծության պատմության մեջ: Իսահակյանը, իրավամբ, նրան անվանել է «հայ պառնասի անգերազանցելի տաղանդ», նաև հավաստել, որ «նրա բանաստեղծություններից անվիճելի մի քանակ կմնան որպես հավերժական արժեքներ բոլոր ժամանակների համար, որպես մարդկային բյուրեղացած զգացմունքներ և անխառն գեղեցկություններ»:

Տերյանի բանաստեղծությունների ուսումնասիրության **նպատակն** է

1. առաջացնել հետաքրքրասիրություն, որպեսզի սովորողները կարդան, սովորեն, զգան Տերյանի շունչը և հաղորդակից լինեն նրա պոեզիայի գոհարներին
2. ծանոթանալ գործող մեթոդներին և ուսումնասիրել ու գտնել այլ տարբերակներ:

Հետազոտական աշխատանքի ***խնդիրներն են*** `

1. Անդրադառնալ Տերյանի գրական ժառանգությանը և վերլուծել <<Մթնշաղի անուրջներ>> ժողովածուի մի քանի բանաստեղծություններ

2.գտնել բանաստեղծությունների ուսուցման այլընտրանքային մեթոդներ

3.զարգացնել սովորել սովորելու, մշակութային, լեզվական կարողունակություններ, ինչպես նաև ստեղծել միջառարկայական կապեր:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ Տերյանի սիրո երգերը դիպչում են պատանիների հոգու լարերին, դրանք արդիական են բոլոր ժամանակներում: Տերյանն այսօր նույնքան սիրելի է, որքան 20-րդ դարի սկզբին: Նրա ստեղծագործությունները երբեք չեն կորցնում իրենց գաղափարական և գեղարվեստական թարմությունն ու գրավչությունը: Քանի որ սերը հավերժական է, հավերժական է նաև Տերյանը: Նրա բանաստեղծություններն ընթերցում ենք ոչ թե պատգամներ ու խրատներ քաղելու, այլ մարդկային գեղեցիկ զգացմունքներ վերապրելու:

«Մթնշաղի անուրջներ»

Տերյանը սիրում էր մարդկանց աշխարհը: Այդ մեծ սիրուց էլ ծնվել են նրա լավագույն երգերը: Կատարյալ է նրա պատկերավորման և արտահայտչական միջոցների օգտագործման վարպետությունը: Նա նոր աստիճանի է բարձրացնում հայ պոեզիայի տաղաչափությունը, հարստացնում նոր ձևերով՝ օգտագործելով ռուսական և արևմտաեվրոպական հին ու նոր պոեզիայի փորձը: Տերյանն առաջինն էր, որ բանաստեղծությունները դասավորեց շարքերով, որոնք ունեն նաև ներքին տրամաբանական և երաժշտականություն և գրված են ոսկեղենիկ, անաղարտ մայրենի լեզվով:

Նուրբ ու հմայիչ են Վահան Տերյանի բանաստեղծությունները, նույնքան գեղեցիկ, որքան հայրենի Զավախքի բնությունը:

Իր ծննդավայրը՝ Գանձան, մի չքնաղ գյուղ է՝ թառած երկինք մխրճվող լեռնապարի լանջին: Այնտեղ երկինքն ու երկիրը կարծես սահման չունեն, խառնված են իրար: Այդ բարձրությունից զարմանալի պայծառ են երևում դաշտերն ու արտերը, որոնց վրա փռվում է կապույտ, երազային, թախծոտ մշուշը: Գյուղից մի փոքր հեռու՝ վեհանիստ բարձրության վրա, ծփում է անհանգիստ Փարվանա լիճը:

«Ես եղել եմ էն երկնքի մոտիկ լեռնադաշտում, ուր ծնվել է Տերյանը, և կարծես թե նա լիքն է էն մշուշային թախիծով ու քնքուշ երազներով, որ բնորոշում են մեր բանաստեղծի քնարը»,- ասել է Թումանյանը և նշել, որ Տերանի թախիծը գալիս է ոչ թե օտար ակունքներից, այլ ծննդավայրից՝ չքնաղ Զավախքից:

<<Թախծում եմ, ճիշտ է, բայց այնպես լուսավոր…>> ,_ գրում էր Տերյանը:

Բնությունն ու գյուղական կյանքն անջնջելի հետք են թողել Տերյանի ստեղծագործությունների վրա, թև ու թռիչք տվել նրա երազկոտ ու տպավորվող երևակայությանը:

Ընթերցելով <<Մթնշաղի անուրջներ>> ժողովածուն՝ կտրվում ենք իրականությունից՝ տեղափոխվելով հեքիաթային և գողտրիկ մի աշխարհ: Մարդու հոգեկան գեղեցկության և նրբակերտ երգերով Տերյանը մեր գրականության ամենամեծ ու ինքնատիպ դեմքերից է, նվիրական ու հարազատ պոետներից:

«Մթնշաղի անուրջներ» է կոչվում թե՞ առաջին ժողովածուն, թե՞ նույնանուն շարքը: Մթնշաղը իրիկնաժամն է, իրիկնաժամի թեթև աղջամուղջը, ավարտվող լույսի և

սկսվող մութի պահը, երբ երազներով տարված հաճելի է զբոսնել: Անուրջը երազանքն է, տեսիլքը, երևակայության մեջ ընկնելու պահը, երանելի, փափագելի զգացողությունների շուրջ լուռ մտորելը: Տերյանի քնարական հերոսը նոր կերպար է: Ի տարբերություն 19-րդ դարի հայ բանաստեղծների՝ Տերյանը քաղաքի երգիչ է: «Քաղաք» վերնագրով ունի երկու բանաստեղծություն, որոնցից մեկն ունի «Քաղաքի երգեր» շարքից հղում, ինչը նշանակում է, որ նա մտադիր էր գրել համանուն շարք: Անկախ դրանից՝ Տերյանի ողջ շարքը հագեցած է քաղաքային բնապատկերներով: Քաղաքի բնակիչն է նրա հերոսը, մտավորական անհատը, որն ապրում է քաղաքային կենցաղով: Քաղաքի երգիչներին ասում էին ուրբանիստ, նրանցից էր բելգիացի բանաստեղծ Էմիլ Վերհարնը: Առաջին հրատարակությունից հետո Տերյանը հետագայում կատարել է լեզվաորճական փոփոխություններ: Նախապես եղած 72-ից բանաստեղծությունների թիվը հասել է 77-ի: Շարքը բացվում է «Տխրություն» բանաստեղծությամբ.

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով…

Տխրությունը Տերյանի ամբողջ ժողովածուի համար դառնում է գերիշխող հոգեվիճակ, դառնում գեղագիտական արժեք՝ բնորոշ հատկապես վեհ ու տառապող հոգիներին: Այդ գլխավոր հոգեվիճակն աստիճանաբար սաստկանում է տխրությունը խորհրդանշող առանձին պատկերներով՝ աշուն, անձրև, թափվող տերևներ, միայնություն, անհուսություն, օտարվածություն, սիրո անհասանելիություն, տևական սպասում: Տխրությունն ինքնին հանդես է գալիս տարբեր նրբերանգներով՝ ցավ, տառապանք, տագնապ, թախիծ, արցունք…

Լուսավոր և վեհ է Տերյանի թախիծը, որովհետև նրան առաջնորդում է երջանիկ կյանքի ու բարձր սիրո երազանքը:

«Տխրություն» բանաստեղծության մեջ Տերյանի պատրանքը մարմավորող գեղեցկուհին է, ով ստվերի նման անցնում է «սահուն քայլերով» և իրիկնաժամի ամայության մեջ թողնում իր մեղմ շշունջը: Նրա շշունջը փոխանցվում է բնությանը՝ դաշտերին ու ծաղիկներին, որոնք էլ իրենց հերթին նրա սիրտը լցնում են այդ սուրբ

շշունջով: Կինը որպես գեղեցկության մարմավորում ձուլվում է բնությանը, իսկ բնությունն այդ գեղեցկությամբ պարուրում է բանաստեղծի հոգին:

Տերյանի հերոսուհուն մենք տեսնում ենք բնության գրկում: Նա անցնում է՝ «ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով», նրա անցնելը նմանեցվում է «թփերն օրորող» թեթև հովի, նա շշնջում է արծակ դաշտերի ամայության մեջ, սիրո խոսք է ասում նիրհող դաշտերին, նրա շշուկը փոխանցվում է ծաղիկներին, որոնք էլ այդ սուրբ շշուկով լցնում են բանաստեղծի սիրտը: Աղջիկն ինքը ևս բնության մաս է, որ ձուլվում է ծաղիկներին և վերապրում է բանաստեղծի էության մեջ:

Ժողովածուի գրեթե բոլոր բանաստեղծությունները էլեգիաներ են և ունեն խորապես անձնական բովանդակություն: Աշնանային թախծոտ երաժշտությունը շարունակվում է «Աշնան մեղեդի» բանաստեղծության մեջ, դառնում է սառը, պաղ ստվերների շարք, հոգին պարուրող անուրախ անհանգստություն, ինչը վերստին ցավեցնում է նրա հիվանդ հոգին, և բանաստեղծն ասում է. «Իմ հոգու համար չկա արշալույս…»:

Ինչպես գիտենք Տերյանին անվանում են սիրո մեծ բանաստեղծ: Նրա գրեթե բոլոր բանաստեղծությունները սիրո մասին են: Կամ եթե սիրո մասին չեն նա այնպես է գրել, որ ընթերցողը բանաստեղծության մեջ գտնի գեղեցկություն, սեր:

Վահան Տերյանի քնարերգությունը իր հասարակագիտական և գեղարվեստական բովանդակությամբ, պատկերի, ոճի և լեզվի յուրահատկությամբ նոր դարագլուխ բացեց հայ բանաստեղծության պատմության մեջ: Նրա ստեղծագործական ուղին, որ տևեց շուրջ տասնհինգ տարի (1904-1919) համընկնում է հենց այն ժամանակաշրջանի հետ, երբ արևելահայ բանաստեղծության ամենից ազդեցիկ կենտրոնական դեմքերը Հովհաննես Թումանյանը և Ավ. Իսահակյանն էին:

Իր պոեզիայի բոլորովին նոր մոտիվներով ու ձևերով Տերյանը ոչ միայն շարունակեց իր մեծ նախորդների գործը և կանգնեց նրանց կողքին, այլև հատուկ ուժով ընդգծեց դարասկզբին հայ բանաստեղծության բազմաշերտությունը:

Հայտնի է նաև, որ <<Տերյանի դարաշրջանը>> հայ պոեզիայում նրա մահով չավարտվեց: Նրա բանաստեղծական ավանդույթները շարունակվեցին նաև հաջորդ տասնամյակներում, պայմանականորեն ասած՝ <<Չարենցի դարաշրջանում>>:

Իր կենդանության ժամանակ Վահան Տերյանը հրատարակել է ընդամենը երկու գիրք՝ <<Մթնշաղի անուրջներ>> ժողովածուն (1908) և <<Բանաստեղծությունների>> առաջին հատորը (1912):

Տերյանի առաջին գրքի վերնագրի երկու բաղադրամասերը (<<մթնշաղ>> և <<անուրջներ>>) առանձին-առանձին և, մանավանդ, միասին վերցրածարտահայտում են շարքի բովանդակության և պատկերային համակարգի մի քանի կողմերը:

Իրոք, <<մթնշաղը>> կամ <<իրիկնաժամը>> բանաստեղծի ամենասիրած պահն էր: Օրվա այդ պահի մասին շարքի 77 բանաստեղծություններից (այստեղ և հետագայում նկատի ունենք <<Մթնշաղի անուրջների>> երկրորդ խմբագրությունը՝ զետեղված 1912թ. հատորում) խոսվում է առնվազն քսանի մեջ: Ինձ վերաբերում է <<անուրջներին>> ապա մենք դա նկատում ենք տասնութ բանաստեղծության մեջ:

Տերյանի քնարական հերոսի իդեալը մշտապես մնում է երազային՝ հակադրվելով իրականությանը:

1912թ. կազմելով իր բանաստեղծությունների առաջին գիրքը Վահան Տերյանը չի դրել իր քաղաքացիական բանաստեղծություններից և ոչ մեկը: Նա պարզապես չի սիրել այդ կարգի բանաստեղծությունները: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այսօր մեր գիտակցության մեջ ապրում է ոչ թե 1908թ. <<Մթնշաղի անուրջներ>>-ը, այլ 1912-ի:

1908 թվականինը որքան ջերմ ընդունվեց, նույնքան էլ ժամանակի քննադատ Նիկոլ Աղբալյանի կողմից ենթարկվեց խիստ դիտողությունների, որոնք վերաբերում էին նաև արվեստի և լեզվի հարցերին:

Նշենք մի քանի արտահայտություններ՝ <<հանգերը շատ աղքատ են>>, <<լավ չի տիրապետում հայոց լեզվին>>, <<անտաշ լեզու>> և այլն:

Տերյանն իր ստեղծագործության զարգացմանը զուգընթաց լրջորեն հաշվի առավ այդ քննադատությունը և 1912թ. տպագրած <<Բանաստեղծություններ>> ժողովածուի մեջ ներկայացրեց <<Մթնշաղի անուրջներ>>-ի հղկված, լրացված, բարեփոխված նոր ու վերջնական տարբերակը՝ դուրս թողնելով գյուղացիական ավանդույթների անցանկալի ազդեցություններով գրված մի քանի գործեր, որոնք գալիս էին հիմնականում Իսահակյանից:

<<Մթնշաղի անուրջներ>>-ի առաջին հրատարակության 72 բանաստեղծություններից երկրորդին անցավ 66-ը, որոնցից 64-ը՝ մեծ ու փոքր խմբագրություններով: Այսինքն միայն երկու բանաստեղծություն է պահպանվել նույնությամբ, իսկ վեց գործ դուրս է մնացել՝ համարվելով <<անհարազատ տարր>> (Մակինցյան):

Ըստ Տերյանի 1912թ. գրքի առաջաբանի՝ դրանք <<սերտ կապ չունեն մյուս գրվածքների հետ>>, ուստի կարող են դուրս հանվել գրքից:

Տերյանը շարունակել է հղկել, մշակել այդ գործերը, կատարել է լեզվաոճական փոփոխություններ, վերանայել է բառապաշարը:

Ստեղծագործական այս աշխատանքը ակնհայտորեն վկայում է նրա գեղագիտական ճաշակի զարգացումն ու կատարելագործումը: Նա նաև վերակառուցել է շարքը՝ դուրս թողնելով վեց և ավելացնելով տասնմեկ բանաստեղծություն, դրա շնորհիվ նախապես հայտնի 72 բանաստեղծությունների թիվը դարձել է 77:

Տերյանի առաջին գիրքը <<Մթնշաղի անուրջներ>>-ը արդյունք էր նախնական կուտակման այն տարիների փորձի և տպավորությունների, երբ նա դեռ գրող չէր՝ երեխա էր, պատանի, երիտասարդ: Երբ հայրենի դաշտերն էր չափչփում, մեծերի սրտամոտ երգերն ու պատմություններն էր լսում: Դպրոցում և համալսարանում սովորում և, աչքը բացելով աշխարհի վրա, հազար ու մի լավ ու վատ է տեսնում, հուզվում, զայրանում, սիրում ու անրջում, ցնորքներ ու իդեալներ փայփայում, հիասթախություններ ողբում:

Քնարերգակների առաջին գրքերը երբեմն լինում են ամենից լավը, երբեմն էլ եթե ոչ ամենալավը, ապա ամենից անմիջականը: Առաջին գրքերից էր քսաներեքամյա Տերյանի <<Մթնշաղի անուրջներ>>-ը: Շուրջ 77 բանաստեղծություն և մեծ քնարերգուի ծնունդ: <<Մի առավոտ զարթնում են հայտնի դարձած>>: Տերյանը այդպիսիներից էր: Իսկ մինչ այդ նա գրել է բանաստեղծություններ, որոնք մեզ չեն հասել: Նա տպագիր սկսնակ չի եղել: Առաջին անգամ երբ Իսահակյանը կարդում է Տերյանի բանաստեղծությունների տետրակը, վրան գրված է լինում <<Արիւն>> բառը: Վարպետը զարմանքով ասում է. <<Մի՞թե արյան երգեր ես գրում>>: Վահան Տերյանի ընկերը ծիծաղում է՝ ասելով, որ Իսահակյանը հակառակ կարդա՝ <<Նիւրա>>: Իրական թե անրջային, իր սիրած աղջկա անունն է Նիւրա, որին նվիրված էին ոտանավորները: Գրականագետները, հենվելով այս բանաստեղծությունների վրա, խոսել են երկու Տերյանի մասին, երբեմն ուղղակի հակադրելով վաղ շրջանը և <<Մթնշաղի անուրջները>>: Այսօր դժվար է ասել թե ինչ բան է <<Արիւն>> տետրը, որից դժգոհ էր մնացել բանաստեղծը:

1908թ. մայիսի 16-ին Թիֆլիսում <<Մթնշաղի անուրջները>> լույս տեսնելուց մի փոքր առաջ, Թումանյանը, կարդալով բանաստեղծությունները գրում է. <<Պետք է նկատեմ, որ ես քաշվում էի, մանավանդ, որ չնայած իր պարզության, ինձ վրա

տպավորություն գործեց, ինչ որ գյոթեական բան կա նրա մեջ: Գուցե հասա՞կը, կամ հենց այդ հանդարտ պարզությունը-չգիտեմ>>: Թումանյանին ամենից առաջ հետաքրքրում է <<նոր բանաստեղծի տետրը>>:

Ի՞նչ պահանջ ուներ Թումանյանը ամեն մի նոր բանաստեղծի նկատմամբբ: <<Դա այն է, թե արդյո՞ք մի ինքնուրույն- նոր բան է բերում այդ մարդը, կամ ցույց է տալիս նշաններ այդ ունենալու>>: Եվ ահա Թումանյանը տալիս է իր վճիռը. <<Ձեր վերաբերմամբ պետք է պատասխանել դրականապես: Դուք բանաստեղծ եք: Դա ամենագլխավորն է>>: Շուտով լույս է տեսնում տետրը՝ <<Մթնշաղի անուրջները>>: Լիովին հաստատվում են Թումանյանի և Իսահակյանի գնահատությունը և գովասանքները: Գիրքը հռչակվում է շատ մեծ արագությամբ, առասպելական մշուշ է ստեղծվում բանաստեղծի շուրջը: Գրական մթնոլորտը բռնկվում է Տերյանի շնչով: Բանաստեղծական ոչ մի գիրք մեզանում չէր արժանացել նման բախտի: <<Մթնշաղի անուրջներ>>-ը գրավել էր գրեթե բոլորին՝ գրական նշանավոր մարդկանց՝ բանաստեղծներին, քննադատներին, մտավորականության լայն շրջաններին: Եվ դրա հետ միասին եկավ մեծ ժողովրդականությունը: Երիտասարդությունը ամբողջովին համակվեց տերյանական տրամադրությամբ: Նրանցից մեկն էլ դեռ գրական առաջին փորձեր անող, ապագայի խոշոր արձակագիր Ստեփան Զորյանն էր: Նա արտասովոր երևույթ է համարում Տերյանի մուտքն ու զարմանալի հայտնությունը, պատմում ժողովրդի սրտագին ընդունելության և ստեղծած լուսավոր, տոնական մթնոլորտի մասին: Ստ. Զորյանի կարծիքով. <<Մեր գրականության պատմությունը չի տեսել բանաստեղծական երկի այնպիսի ընդունելություն, որին արժանացավ Տերյանի <<Մթնշաղի անուրջներ>> ժողվածուն: Բոլոր քննադատները երիտասարդ Տերյանի մեջ նկատեցին նորություն, թարմություն և տաղանդ>>:

Այս ժողվածուն ավելի ջերմ ընդունելություն գտավ երիտասարդության կողմից և կարճ միջոցում Տերյանն ունեցավ հետևորդների մի ամբողջ բազմություն, իսկ երկրպագուներին թիվ չկար:

Տերյանի պոեզիայում սերն էլ, վիշտն էլ, արևածագի և գարնան սպասումն էլ ուրիշ ձևերով և եղանակներով, արտահայտչական ուրիշ միջոցներով են երգված: Նա մեր ամենից ինքնատիպ գրողներից է, անհնար է նրա ձայնն ու շունչը իսկույն չտարբերել, նրա տողն ու խոսքը շփոթել ուրիշի հետ: Այդ պատճառով է, որ մեծերը այս ժողվածուն համարեցին ինքնատիպ ու նոր երևույթ:

<<Մթնշաղի անուրջներ>>-ի բանաստեղծությունները գրավում են անսահման հարազատությամբ, մարդու հոգեկան աշխարհի, նվիրական հույզերի ու իղձերի նրբին ու մտերիմ արտահայտումով, անուրջ կույսի սուրբ շշուկով, լույս երազների քաղցրությամբ ու հուսախաբությունների թախիծով:

Քիչ գրքեր, մանավանդ երախայրիքներ կան, որ երկարակյաց են լինում: Տերյանի առաջին ժողովածուն ամենաերկարակյացներից է: Ստ. Զորյանը իր հուշերում գրել է, որ այդ տարիներին գրական մթնոլորտը շնչում էր Տերյանով:

<<Մթնշաղի անուրջներ>>-ը <<գեղեցիկ արշալույս>> էր, որ պայծառ օր էր խոստանում: Այս ժողովածուն իր կախարդական հմայքով գլխովին մոլորեցրել էր, նվաճել ընթերցողին: Այն այնքան թարմ ու նոր էր, որ մի պահ մոռացվեցին մյուս բանաստեղծները: Տերյանը միանգամից ընդհանուր ճանաչում գտավ՝ մեր գրականության անդաստանը բերելով աննախընթաց նորություններ: Երիտասարդության խոսակցության նյութը ամեն տեղ նրա բանաստեղծություններն էին, իսկ ընկերների և սիրահարների սրտագին նվերը միմյանց՝ <<Մթնշաղի անուրջներ>>-ը: Այս գրքույկը իր գաղափարական ու գրական կուլտուրայի իմաստով նոր աստիճան նշանավորեց և նոր ուղի նշեց նրա զարգացման համար:

Պատանի հասակում հեռանալով հայրենի եզերքից՝ Տերյանը անջատված զգաց իրեն հավիտենական այն մասունքներից, որոնք խմորել էին նրա մարմնի և հուգու բջիջները: Անջատվածության այս զգացումը մի անլցելի ճեղք էր ստեղծել Տերյանի բանաստեղծական <<տեսողության>> մեջ, իրերի արտապատկերները գծելով թափանցիկ ստվերների շղարշով:

…Ինձ այրում է միշտ մի անհագ թախիծ,
Հավիտյան դյութող անհայտ ճանապարհ

Ժամանակի և տարածության միավորները Տերյանը չափեց էկզոտիկ հեռավորության վրա և անցյալն ու ներկան հարաբերեց երազ աշխարհի հուշերում: Գեղեցիկ անուրջներին և ցնորքներին տրվելը տհաճ իրականությունից կտրվելու ձգտումն է, որը իրական կամ անիրական հակադրվում է շրջապատող աշխարհի անհրապույր պատկերներին: Այս առումով անրջայինը թևածում է ամբողջ շարքի վրա: Հենց մթնշաղային և անրջային պատկերներն են, որ միավորում և համախմբում են շարքի

բանաստեղծություններն ընդհանուր վերնագրի <<հովանու տակ>>, ստեղծում են մի ավարտուն ամբողջություն ինչպես իմաստի, այնպես էլ կառուցվածքի առումով:

Հատկանշական է, որ շարքը բացող առաջին իսկ բանաստեղծությունը՝ նշանավոր <<Տխրություն>>-ը պարունակում է և՛ իրիկնաժամը, և՛ անրջային պատկերը, թեև ոչ թե իբրև հոգեվիճակ այլ մարմնավորված <<գունատ աղջկա>> կերպարի մեջ: Ժողովածուն սկսում է թախծոտ տրամադրությամբ՝ աշնան տխուր մեղեդիներով, նրբակերտ մթնշաղի և վերջալույսի, մեռնող բնության և դալուկ աշնան պատկերներով և ավարտվում է գարնանային պայծառ երգերով:

<<Տխրություն>> բանաստեղծությունը գրված է արտասովոր նրբությամբ և ունի գերող երաժշտականություն: Տխրությունը խորհրդանշող աղջիկը նման է քնքուշ մութի թևին, իրիկնաժամին թփերն օրորող թեթև հովին: Նա գունատ է, ճերմակ շորերի ու ստվերի պես անմարմին ու աննշմար, մթնոլորտը լցնում է ազնիվ տխրությամբ և գերող թախիծով:

<<Աշնան մեղեդին>> բանաստեղծությունը նույնպես ցաված հոգու արձագանքն է: Աշնան երանգները խտացնում են տրամադրությունը, մթնոլորտ ստեղծում ցավագին ապրումների համար:

Աշու՛ն է, անձրև՛…Ստվերներն անձև դողում են դանդաղ… Պաղ, միապաղաղ…

Հոգնած քնարական հերոսին աշխարհը պատկերանում է որպես ոսկե տեսիլների, հեռավոր լույս անուրջների մի շղթա: Նա չի ցանկանում այլևս տառապել:

Աշնան թախծալի երգը նաև բանաստեղծի սրտի երգն է: Քնարական հերոսը սիրում է աշխարհը, բայց կյանքի ամեն մի հարված հետք է թողնում նրբազգաց հոգու վրա: Նա երազում է մտերմիկ խոսք, փրկության կանչող ձայն: Խավարում մոլորված հոգու մեջ արթնանում են աշխարհի կարոտն ու կյանքի սերը:

Բանաստեղծին տանջում է բախտի ու երջանկության հարցը: Տերյանի սիրային լիրիկայի մեջ գերիշխողը երազային, անիրական սերն է:

Սեր փնտրելով կյանքում և այն չգտնելով՝ պոետը մի <<քնքուշ հեքիաթ>> էր հյուսել <<լուսերես, անմարմին, անանուն>> աղջկա մասին՝ այն հակադրելով <<կյանքի չար երազին>>:

Ես սիրում եմ երազ ու ստվեր,

Ես իմ սերն եմ սիրում…

Նա հերոսի ցավին տալիս է խոր իմաստ, դառնությամբ բողոքում ապականված աշխարհի դեմ, ուր սերը վաճառքի է հանվում:

Տերյանը հյուսում է թախծոտ ու քնքուշ երգեր, մեծարում է կնոջը, նվիրագործում ճշմարիտ գեղեցկությունը:

Սերը մաքրագործող այդ զգացմունքը նեցուկ է լինում իրեն այդ աշխարհում:

Բանաստեղծը կատարում է մի շատ գեղեցիկ զուգահեռ երկնային մարմինների խորհրդավոր ընթացքի և երկրային ցաված հոգիների միջև: Այդպես է նաև մարդկանց աշխարհը: Նրանցից ամեն մեկը մի առանձին մոլորակ, մի ինքնուրույն տիեզերական մարմին, և ամեն մեկը ձգտում է դեպի աշխարհը, դեպի հարազատ հոգին:

Տերյանի քնարերգության հիմնական տրամադրություններից մեկը անհասանելի սերն է:

Այդ սիրո առջև բանաստեղծի կյանքն է՝ որպես <<մի լուսեղեն հեքիաթ>>, հեռվում <<անհայտ կորած մի հեզ լույս>>, որը ցնորք աղջկա համար հավետ անծանոթ տաճարում <<Կանթեղի պես առկայծում է քո դիմաց>>:

Հաջորդում է <<Fatum>> բանաստեղծությունը՝ նրբագեղ ապրումների մի շղթա, որի մեջ սիրատենչ հոգիները նմանվում են երկնքում շողացող աստղերի, որոնք ավաղ հեռու են իրարից:

Կախարդական մի շղթա կա երկնքում՝
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու.
Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
Օղակելով լույս աստղերը մեկ-մեկու:

Մեղմ գիշերի գեղագանգուր երազում՝
Այն աստղերը, որպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտագին, երազուն՝
Հավերժաբար իրար կապված և բաժան:

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու.
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և՜ հարազատ, և՜ օտար…

Բնության և մարդկային հոգու կախարդիչ մի պահ է: Երկնքում աստղերի աներևույթ շղթան նմանեցվում է խոր հոգու ցավին: Այդ աներևույթ շղթան կախարդական է, որն իջնում է <<հուշիկ, որպես իրիկուն>>:

Տերյանին մշտապես հարազատ, սրտակից և մտերիմ են իրիկնաժամի հոգեհարազատ պահերը: Նրա <<Մթնշաղ>> բանաստեղծությունը ասես սիրո խոստովանություն լինի, բայց ոչ թե ցնորք աղջկան այլ հոգեհարազատ այն պահին, որին մեջ բանաստեղծն ասես յուրովի վերագտնում է իրեն:

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,
Երբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,
Ցնորում է կապույտ մութի աշխարհում…
Չկա ոչ մի սահման դնող պայծառ շող,
Աղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ մաշող,-
Հիվանդ սիրտը չի տրտնջում, չի ցավում,
Որպես երազ մոռացումի անձավում.
Եվ թվում է, որ անեզր է ամեն ինչ -
Որ ողջ կյանքդ է մի անսահման քաղցր նինջ…

Մթնշաղը ոգևորում է բանաստեղծին, որովհետև անուրջների պահն է, ամեն ինչ խորհրդավոր ու խոհուն անցումներով նրան պարուրում է ցնորքների մեջ: Կապույտը երազանքի գույնն է: Անրջական այդ պահը գտնված է, որովհետև մարել են օրվա աղմուկները, հեռու են սառն ու օտար մարդկային դեմքերը, հիվանդ սիրտը չի տրտնջում, կյանքն ասես լինի <<քաղցր նինջ>>:

Բանաստեղծը, որն անսահման թախիծով է երգում կյանքի տառապանքները, <<Մթնշաղի անուրջներ>>-ը ավարտվում է <<Գարնանամուտ>> բանաստեղծությամբ, որի մեջ ողջույն է հղում իր հոգում էլ նոր սեր հրդեհած, նոր երգեր ներշնչող արևին և գարնանը:

Նոր երգերից է <<Գարուն>> բանաստեղծությունը՝ գրված 1908թ. այստեղ գարնան գույները ձուլված են պայծառ ապրումներին: Ծաղկած գարունը ծնում է սիրո և քնքշանքի ցանկություն:

Գարունը այնքա՜ն ծաղիկ է վառել,
Գարունը այնպե՜ս պայծառ է կրկին.
— Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,
Ուզում եմ անուշ փայփայել մեկին:

Ներկայացնում է գարնան պատկերը <<հոգու անուշ տագնապը>>, որն անընդհատ աճելով նոր հուզում է արթնացնում մարդկանց հոգիներում:
Տերյանի նույնիսկ ամենամռայլ թվացող բանաստեղծության մեջ հաճախ կարելի է նկատել լույսի շող, կյանքի, արևի, գարնան, մարդու կարոտ: Նրա հոգին տենչում է արշալույս, նա սպասում է իր կյանքի այգաբացին:
Նրա քնարական հերոսը բազմիցս հավաստում է, որ ինքը դուրս է եկել մենության բանտից՝ զվարթ ու ջահել, հզոր ու հպարտ, որ ինքը վերածնվել է:

Իմ կյանքը մի նուրբ մշուշ է պատել,
Գուրգուրում է ինձ մի լույս հանգրվան…

Նա ամենանեղ պահին անգամ չի չարանում աշխարհի դեմ: Նրա քնարական հերոսը անսահման մեղմ է և անհիշաչար: Բանաստեղծի թախծոտ տրամադրությունը արագ կարող է փոխվել կենսախնդության, ինչպես <<Գարնանամուտ>> բանաստեղծության մեջ: Այժմ անտառ ու ձորակ ժպտում են պոետին, գարունը զուգել է ամեն ինչ, ամեն տեղ <<նոր կյանք է վառել>>՝ նրա հոգում ևս հրդեհելով նոր սեր:

Քնքշաբույր ծաղկանց հրեղեն խաղով
Ժպտում են նորից անտառ ու ձորակ,
Եվ հեղեղները խոսուն-սառնորակ
Ողջունում են ինձ զվարթ ծիծաղով:
Զուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
Գարո՛ւն, ամեն տեղ նոր կյանք ես վառել
Իմ սրտում էլ ես թևերըդ փռել,
Էմ հոգում էլ ես հրդեհել նոր սեր:

Տերյանը երգում է նաև <<առավոտի դյութական համբույրը>> և գինովցած <<նոր երազով>>, պատրաստ է բացսիրտ ու ազատ ժպտալ աշխարհին ու մարդկանց, սիրել ու սիրվել: Սերը ամեն ինչի հիմքն է, եթե սերը <<կյանքի պոեզիան ու արևն է>>, արդյոք նա իր մեջ չի՞ համատեղում սեր՝ կյանքի, արևի, մարդու և բնության նկատմամբ:

Աշխարհում ամեն լավ բան ծնվել է կնոջ հանդեպ տածած սիրուց:

Սեր ու երգ է իմ հոգում,

Սիրո երգ է իմ հոգին:

Բանաստեղծությունների ուսուցման այլընտրանքային մեթոդներ

Պոեզիայի դասավանդումը միջին դպրոցում հաճախ կարող է լինել մարտահրավերային: Աշակերտներից ոմանք կարող են սիրով ընթերցել և սովորել դրանք, իսկ ոմանք հակառակը: Դասավանդման դժվարությունը կայանում է նրանում, որ կարողանանք ոգևորել աշակերտներին և ուսուցման գործընթացքը դարձնենք ավելի հետաքրքիր և ինտերակտիվ: Դասապրոցեսում անհրաժեշտ է կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն աշակերտների հետաքրքրվածության բարձր աստիճանին և ներքին մոտիվացիային:

Տերյանի բանաստեղծությունները սիրելի են շատերին, սակայն քանի որ որոշ աշակերտներ դժվարություններ են ունենում միայն ընթերցելով հիշել բանաստեղծությունը, դասերի ընթացքում մենք օգտվում ենք նաև այլ մեթոդներից: Դրանցից մեկը բանաստեղծությունների ուսուցանումն է երաժշտության միջոցով: Դասի ընթացքում համակարգչով միացնում ենք Տերյանի բանաստեղծությունները, որոնք այնքան երաժշտական են և տպավորիչ, որ շատերը երգեր են դարձել: Դասերի ընթացքում երեխաների հետ միասին երգում ենք, ինչն էլ նպաստում է ավելի արագ և սիրով սովորելուն:

Այսպիսով խթանում ենք միջառարկայական կապը, աշակերտները նույն թեմային անդրադառնում են տարբեր ուղղություններով և որոշների պարագայում այն ավելի սիրելի է դառնում:

Մյուս մեթոդը բանաստեղծությունները նկարելն ու պատկերելն է, ինչը Տերյանի ստեղծագործությունների պարագայում բավականին հեշտ է ստացվում: Երեխաներից շատերը նախագծային աշխատանքի շրջանակներում վերլուծում են բանաստեղծությունը, նկարում այն՝ պատկերելով և թղթին հանձնելով իրենց զգացողությունները:

Եզրակացություն

Ուսումնասիրելով Տերյանի <<Մթնշաղի անուրջներ>> ժողովածուի որոշ բանաստեղծություններ գալիս ենք այն եզրակացության, որ այս գրքի լույսընծայումը բանաստեղծի <<հոգու թռիչքն էր>>, որը նրան անմիջապես կանգնեցրեց մեր դասականների կողքին: Նրա մուտքի ժամանակ արևելահայ պոեզիայում ամբողջ մեծությամբ կանգնած էին Հովհաննես Թումանյանը և Ավետիք Իսահակյանը: Նրանցից հետո Տերյանը կարողացավ նոր խոսք ասել: Նա խոսեց 20-րդ դարի մարդու լեզվով, տարբերվեց մյուսներից և իր համար <<արևի տակ>> տեղ բացեց՝ դառնալով ամենասիրված գրողներից մեկը, թերևս ամենից սիրվածը: Տերյանի մուտքը այնքան շռնդալից էր, որ մի պահ մոռացվում են մեր բանաստեղծները, և սկսվում է տերյանական շրջան՝ <<Տերյանի էպոխա>>: Հարկ է նշել, որ Տերյանի <<Մթնշաղի անուրջներ>> ժողովածուն հոգու մի անկրկնելի մատյան է՝ հույզերի, խոհերի, սիրո, կարոտների, երազների ներհուն գրանցումներով, որոնք կամրջում են մեզ իր ժամանակի հետ:

Ամփոփելով հետազոտական աշխատանքը, հանգում ենք այն եզրակացության, որ Տերյանի բանաստեղծությունների ուսուցանումը միջին դպրոցում անչափ կարևոր է: Այն նպաստում է աշակերտների գեղագիտական ճաշակի բարձրացմանը: Իսկ ուսուցանման գործընթացը ավելի արդյունավետ և հետաքրքիր կազմակերպելու համար անհրաժեշտ է կիրառել այլընտրանքային մեթոդներ, ինչպիսին է պոեզիայի ուսուցանումը երաժշտության և կերպարվեստի միջոցով: Սա էլ իր հերթին ապահովում է միջառարկայական կապը:

Տերյանի ամենամեծ և գնահատելի դերը նրանում է, որ նրա բանաստեղծությունները միշտ արդիական են: Մեկ դարից ավելի է անցել, բայց նրանք չեն խունացել, այլ ավելի են գեղեցկացել և նրանցից մի մասը երգի է վերածվել՝ հուզելով բազում սրտեր, պարուրելով մարդկանց հոգիները սիրով և ջերմությամբ:

Խորապես կապված ազգային գրականության ավանդույթներին և յուրացնելով մարդկության գեղագիտական փորձը՝ Տերյանը հայ քնարերգությունը հասցրեց համաշխարհային պոեզիայի բարձունքներին: Ժամանակը մեզ չի հեռացնում նշանավոր արվեստագետից, որն իր մարդկային զգացմունքների անսպառ

հարստությամբ այսօր էլ մեզ հետ է. խորհելիս՝ մեր մտքում, հուզվելիս՝ մեր սրտում: Տերյանի լիրիկան անբաժան է մեզնից, այն մեր պոեզիայի նոր ու բարձր աստիճանն է՝ մշակված, հղկված, երաժշտական նուրբ ու մեղմ արտահայտություններով: Ավ. Իսահակյանի խոսքերով ասած. <<Անցել են շատ տարիներ, բայց նրա պոեզիայի հմայքից ոչ մի նշանախեց չի պակասել: Նա մնում էր իր առաջին օրվա գեղեցկության մեջ, միշտ անփոխարինելի, միշտ անմրցելի>>:

Օգտագործված գրականության ցանկ

1. <<Հայ նոր գրականության պատմություն>> հատոր 5-րդ, խմբ. Ս. Սարինյան. 1979թ.
2. Էդվարդ Զրբաշյան <<Չորս գագաթ>>, Երևան 1982թ.
3. <<Հայոց լեզու և գրականություն>> 6.2016, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, գլխ. խմբագիր Դավիթ Գասպարյան
4. <<Հայոց լեզու և գրականություն>> 2.2010, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, գլխ. խմբագիր Դավիթ Գասպարյան
5. Վաչե Պարտիզունի. <<Վահան Տերյան>> Երևան 1968թ.
6. Վաչե Պարտիզունի. <<Տերյանի կենսապատումը>>, Երևան 1984թ.
7. Հրանտ Թամրազյան. <<Վահան Տերյան>>, Երևան 1985թ.